ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/40, 22.03.2019թ.

Բողոք բերող անձ՝ Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյան

Պատվիրատու Երևանի քաղաքապետարան

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով բաց մրցույթ

Գնման առարկա Ոսկեգույն թույների մատակարարում

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 2019թ. մարտի 12-ի թիվ 3 արձանագրության 1.2 և 2-րդ կետերով ընդունած որոշումները, 2019թ. մարտի 19-ի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով ընդունած «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու

օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների վերաբերյալ բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող.1

Բողոք բերող անձ՝
Ֆ/Ա ԴԵՐԵՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ /անձնագիր՝
AK0472137, տրված 06.04.2010թ-ին 001-ի կողմից
Հասցե՝ ք. Երևան, Շահումյան 16 փող., տուն 100/10
էլ. փոստ՝ derenik.hovhannisyan.62@mail.ru
հեռ. +374 41 88 23 88

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ ՀՀ, Երևան, Արգիշտիի 1,
էլ. փոստ՝ vachagan.mejunc@yerevan.am

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3
Գնման ընթացակարգի առարկան՝
ոսկեգույն թույաների /կիպարիս/ մատակարարում

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱԶԱՏՎԱԾ
ՍՏԱՑ N U-12547-19
22 03 2019թ.

ԲՈՂՈՔ

1. Բողոքի առարկան

Սույն թվականի հունվարի 22-ին ոսկեգույն թույաների /կիպարիս/ ձեռքբերման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ, որի մասնակցության հայտ եմ ներկայացրել նաև ես և որի գնահատման արդյունքում տեղի ունեցել խախտումներ, ինչի արդյունքում զրկվել եմ պայմանագիր կնքելու հնարավորությունից:

2. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

2"1" Ինչպես վերը նշվեց, Երևանի քաղաքապետարանը ոսկեգույն թույաների /կիպարիս/ ձեռքբերման նպատակով ս/թ-ի հունվարի 22-ին հայտարարել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների հայտ եմ ներկայացրել նաև ես՝ Դերենիկ Գրիշայի Հովհաննիսյանս: Իմ անունից ներկայացվելիք փաստաթղթերը ստորագրվել են իմ կողմից լիազորված անձի կողմից:

Հայտերը բացվել են ս/թ-ի մարտի 05-ին հրավիրված նիստում, ինչի մասին կազմվել է գնահատող հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությունը /կցվում է/, համաձայն որի հայտ են ներկայացրել 5 մասնակիցներ, որոնցից անբավարար է գնահատվել միայն ԱՁ Սիրանուշ Հովհաննիսյանի հայտը: Բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացնող մասնակիցը ես եմ եղել: Այնուհետև ս/թ-ի մարտի 6-ին էլ. փոստի միջոցով ստացել եմ ծանուցում /կցվում է/՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից մասնակցել ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու նպատակով կազմակերպված միաժամանակյա բանակցություններին մասնակցելու համար:

Ս/թ-ի մարտի 11-ին մասնակցել եմ միաժամանակյա բանակցությունների նիստին՝ ինչը կարող են հավաստել գնահատող հանձնաժողովի անդամները, իմ կողմից ներկայացված գինը չեմ նվազեցրել, որից հետո նույն օրը՝ ժամը 12:13ին ստացել եմ ծանուցում, որ,ճանաչվել եմ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից /ծանուցումը կցվում է/:

Ս/թ-ի մարտի 15-ին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվում է N 3 արձանագրությունը /կցվում է/, որում նշված է, որ բանակցություններին մասնակիցները չեն ներկայացել, իսկ իմ կողմից ներկայացված հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ հայտի վրա էլեկտրոնային թվային ստորագրությունը ինձ չի պատկանում, իսկ լիազորագիրը բացակայում է:

Այս ամենից հետո ս/թ-ի մարտի 19-ին «armeps» համակարգից իմ էլ. փոստին գալիս է ծանուցում, որ ես չեմ անցել ընթացակարգի հաջորդ փուլ, ավելին՝ հաղորդագրությանը կցված էր պայմանագիր կնքելու հայտարարությունը՝ որում նշված էր, որ իմ կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, իսկ որպես հիմք նշված էր ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որով սահմանված է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, այն ինչ իմ կողմից ներկայացված գնային առաջարկում որևէ անհամապատասխանություն չկա:

Վերոգրյալից երևում է, որ ընթացակարգը անց է կացվել մի շարք խախտումներով, մասնավորապես՝

- հանձնաժողովի կողմից ի սկզբանե բավարար գնահատված հայտ ներկայացված մասնակիցը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, վերջինիս ներկայացվել է ծանուցում, այնուհետև գնահատող հանձնաժողովը կայացրել է իրարամերժ որոշում, որը բացարձակապես չի համապատասխանում ծանուցմանը.

- ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է իմ կողմից ներկայացված հայտը՝ պատճառաբանելով, որ համապատասխան լիազորագիրը կցված չէ, իսկ որոշման հիմքում նշել է ՀՀ կառավարության 2017թ. ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որն ինչպես արդեն նշեցինք, սահմանում է, որ հայտը ենթակա է մերժման, եթե հայտում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, մինչդեռ իմ կողմից ներկայացված հայտում առկա է գնային առաջարկը և այն լիովին համապատասխանում է ընթացակարգի հրավերի պահանջներին: Կարծում եմ, որ տվյալ դեպքում պետք է կիրառվեր ՀՀ կառավարության 2017թ. ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետը, որը սահմանում է, որ *եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը*, և ինձ հնարավորություն ընձեռնվեր շտկել հայտում առկա անհամապատասխանությունը՝ ներկայացնել լիազորագիրը:

3.Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ.

1. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 2019 թվականի մարտի 12-ի թիվ 3 արձանագրության 1.2-րդ և 2-րդ կետերով ընդունված, 2019 թվականի մարտի 19-ի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով ընդունված «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին» որոշումները:

Կից ներկայացնում եմ.

1. Տուրքի վճարման անդորրագիրը"
2. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հայտարարությունը:

Բողոքը ներկայացնող անձ՝

Ք. Երևան
22.03.2019թ.